ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Ծակքար
Կայք tsakqar.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 0262-6-00-28:6-12-09
№ 227
09 սեպտեմբերի 2020թ.

<<ՀԱԲ-ԳԱԲ ՇԻՆ>> ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն միակողմանի լուծելու մասին

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքարի համայնքապետարանի և <<ՀԱԲ-ԳԱԲ ՇԻՆ>> ՍՊԸ-Ի միջև 14.08.2019թ. կնքված ՆԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/6-ՄՇ ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապառալուն պարտավորվում է սույն պայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով , ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի մշակույթի տան հիմքերի ուժեղացման աշխատանքների, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձնման վերջնաժամկետ էր սահմանվել 14.04.2020թ., որը ՀՀ կառավարության 24.12.2019թ. N1910-Ա որոշման համաձայն երկարացվել էր մինչև 01.08.2020թ.:

Վերը նշված պայմանագրի շրջանակում, ընկերությունը պայմանագրով նախատեսված 18.000.000 (տասնութ մլն.) ՀՀ դրամի փոխարեն կատարել է 6.780.000 (վեց մլն.յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չեն կատարվել 11.220.000 (տասնմեկ մլն. երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամի աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Վերը նշված պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ <պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Ծակքարի համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <գնումների գործընթացի կազմակերպման մասին> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Գեղարքունիքի մարզի Ծակքարի համայնքապետ՝ Գ. Ավետիսյան